



Վրինա տպարանը ՍՆՏՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՆ ԵՂԲԱՐՅԱՆ — ԳԱՆՆԻՐԻ

“ՓԻՆՆԻՆ” ԾՐԱԳԻՐԸ

- ՓԻՆՆԻՆԿ պիտի հրատարակուի ամսօր տեղում անգրան, ամեն ամսոյ 1ին եւ 15ին:
- 1.—Տոնմայիս կեանքի հին ու նոր-պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ուսումնասիրութիւններ. Հայոց գաղթական հասանքին վրայ բանական տեսնութիւններ, մասնաւորապէս Արարատի հին ու նոր գաղթականութեանց:
 - 2.—Արձակ եւ ոտնաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգմանութիւն:
 - 3.—Իրական նորութիւններ, կէս-ճանօթ մարտիչոց կեանքն ու բարեկեանքը մանրամասնութիւններ, հուշակալներ երկրաբաններու երկերէն հաղուած:
 - 4.—Ազգայնական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսնութիւններ:
 - 5.—Վիսամսեայ քննի. հաղափական կայսրութեան վրայ հոժ ու անկողի տեսնութիւններ:
 - 6.—Արտասահմանի եւ գաւառական թղթագրութիւններ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԵ ԳՐՈՒԹԵԱՆ

Ազգայնական համար	Տարեկան	Փր. 10
»	Վեցամսեայ	» 6
Արտասահմանի համար	Տարեկան	» 13
»	Վեցամսեայ	» 7
Կովկասի համար	Տարեկան	բարձր 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Մեր Յոյսերը. — Խ.
 Չորը. — Ս. ԲԻԻՐԱՏ
 Մեր Պատկերները. — ՀԱՅՐ ՄԸ
 Մահաբանութիւն — Ս. Օ.

Իրական կեանքէն (Եսեօ)
 Լրագրող
 Քաղաքական կիսամտեակ



Չեռագիրները եւ չեն դարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազգեր: Եւրոպայի, յարուստ եւ բաժանորդագրին պէտք է զրկել առ Տարբ. Ս. ԲԻԻՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE **ՓԻՆՆԻՆ**
 INSTITUTION CENTRALE

LE CAIRE


 ԵԳԻՊՏՈՍ
 ՏՐ.
 ՏԱՐԵԿԱՆ... 10
 ՎԱՅԱՄՍԵԱՅ 6
 —
 ՔԱՃՆԵԳԻՆԸ
 ԿԱՆԽԻԿ Է


ՓԻԻՆԻԿ


 ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
 ՏՐ.
 ՏԱՐԵԿԱՆ... 13
 ՎԱՅԱՄՍԵԱՅ 7
 —
 ԿՈՎԿԱՍ
 ՏԱՐԵԿԱՆ ԲՈՂ. 5


ԿԻՍՈՒՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ս. ՏԱՐԻ

15 ՅՈՒՆԻՍ 1899

ԹԻԻ 6

ՄԵՐ ՅՈՑՍԵՐԸ

Մինչդեռ ազգերը կը համախմբին տոնելու տիեզերական խաղաղութիւնը, և պահ մը մոռնալով իրենց կրօնները, կ'աշխատին պատերազմին արհաւիրքն արգիլելու միջոցները գտնելու, մենք, Հայերս, կ'սկսինք յուսալ նորէն: Հարեանցի ակնարկով մը կրնանք, վերջին հազար տարիներու ընթացքում այս ազգին կրած հալածանքին վրայ զաղափար մը կազմել: Կաշի, ԽՏՐԻԿ, Թիխուրչենկ ու Շահաբաս. ահա՛ չորս մարդակերպեր, որոնք յատկապէս ստեղծուած էին մեր սերունդը բնաջինջ ընելու համար: Պաշտօնապէս հազարային եկեղեցի մեջ հայ ազնուականութիւնը կ'այրէ. Խրուրիկ Հայերու արիւնով լիճ մը կը կազմէ ուր կը լողայ դիւանային խնդամալութեամբ մը. Թիխուրչենկ՝ հազարաւոր հայ մանուկներ իր վայրենի հեծելազօրքին ոտնակոխել կուտայ, գերիզմանները կը լեցնէ ողջ ողջ կրտսերներով, քաղաքները մտիրակայտներու կը փոխէ, աւելին, հայ միտքն ալ իր բոլոր արտադրութիւններով կը տանի կը բանտարկէ ի Սմրղանա իսկ Շահաբաս, գետի մէջ կը խեղդէ վաթսուսն հազար հայ ընտանիքներ, և այս-

պէս մինչև հիմայ Այս ազգն անցած է այնպիսի տանջանքներէ որ ժողովուրդները զանի կ'տնուանեն Մարտիրոս ժողովուրդը...:

Եւ հիմայ, ուխտագրութ և արիւնկալի թշնամիներէ հարստահարուած, թշնամիներ որ մարդկութեան նուիրական օրէնքները բռնաբարեցին, անմեղները կատարեցին տնտեսայ, կը գարձնէ իր մահանշուղ նայուածները դէպ ի Լահէյ, կեզրոնը Խաղաղութեան Համաժողովին, ու, անխուով հայրենասիրութեան անզուսպ սրայքով մը կ'աշուս կ'ընէ բոլոր տէրութիւններուն խղճին — եթէ ունին — ստանալու յուսով արգարութիւնը...:

Թող աշխարհ արարած հասկնան թէ՛ մենք, Հայերս, կրեցինք օրէնքը հզօրագունին, ու, մեր դարաւոր ու փառաւոր անկախութիւնը պահելու համար յուսահատական ճիգեր թափելէ, ոյժեր ու սերունդներ սպառելէ ետք, պարտուեցանք թող այնպէս ըլլայ: Հիմայ, մեր յոյսերուն աւերակին հանդէպ, մեր հայրենիքի քանդումին առջև, կը համակերպինք, և կ'ընդունինք — ինչ ընէինք — պայմանները հաշտութեան, զոր հաճեցան մեզ առաջարկելու: Մենք հաւատարիմ մնացինք մեր խոստումներուն և յանձնառութիւններուն. բայց

կեղեքիչը, բայց բռնակալը դժեց իր խոստումին դէմ, չարունակ ճնշեց մեզ, չարչարեց այն աստիճան որ յուզուեցան անոնք որ չունեցան կառավարողներուն անդգամութիւնը, և որ քիչ շատ վարժուած էին գլխաւոր իսկ մենք, մեր ասհմային հպարտութեան մէջ, մինակ, լքուած, տարինք մեր խաչը, սակայն, մեր կատաղի ազաղակները չանցան մեր երկրի սահմանագլխէն անդին: Առանց ահի, դէմ առ դէմ գանուեցանք մահուան, զոր արհամարհեցինք, այն յուսով թէ՛ օր մը պիտի կրնայինք ուժեղ ըլլալ այնքան որ յարցել տալ զիանայինք մեր իրաւունքները. և սակայն, արեան հեղեղները վաղեցին յորդառատ, ներկեցին փողոցներն ու հրապարակները. բացերը լափելեցին մեր հայրենի բնակարաններն ու մեր սրբազան հաստատութիւնները. հրոսակները մարտնչեցին պէս կերան մեր այգեկութիւնն ու արմատէն կտրեցին սրթատնկերը, յամբեցուցին մեր գոյութեան աղբիւրները, աննախընթաց ու անլուր խժգժութիւններով մտնեցին մեր մարմիններն ու սղկեցին մեր ոսկորները. մեր մայրերուն արգանդները ճեղքեցին, նորածինները մտադործի կեռերէն կախեցին, մեր քոյրերը լկեցին, մեր կիներն առեւանդեցին, սրբութիւնները պղծեցին ու բերին զմեզ ձգեցին խորունկ ու խաւար վիհի մը մէջ, որ վախնալով ահանատես ըլլալէ վերջին Հայուն մահուանը, ստիպուեցանք ազաղակել աշխարհի երեսին ամբողջ ժողովրդի մը նահատակութիւնն ու մեր գահիճնեբուն վատութիւնը . . .

Սակայն, ինչո՞ւ համար Եւրոպան խուլ մնաց, և ինչո՞ւ չը զիջաւ մեզ ձեռք կարկառել: Արդեօք անո՞ր համար որ մենք, մեր չարչարանքին մէջ, ապացոյցը տուինք ստոյիկեան համբերութեան մը, կամ, մեր անվերջ ու անընդհատ տառապանքը տեսնելու վարժութիւնն էր իրենց, որ աւրեն գլխութիւն գուլ ու բութ եղաւ

անոնց սրտերուն մէջ, որոնք քաղաքակրթեալ ականատեսներն եղան այնքան սարսափներու . . . : Կրսեն թէ՛ կա՞ն ընկերային վէրքեր, որոնց մարդիկ այն աստիճան վարժուած են որ, թերթերուն մէջ անոնց հրատարակութենէն ո՞ր և է սարսուռ մը չեն զգար: Ա՛խ, այս ազգը, որուն վրայ մարդասպանները կը մղեն մուկիկ միջումներ, անգլխօրէն մահայնեղ զանի, կամ աւելի յոտին, հրէշային լուսանքներ թափելով անոր գլխուն. այն ազգը, որ վայրագ գահավիժումով մը կ'սպաննայ կործանելու, չպիտի՞ կրնայ յաջողիլ իրենց թմբուկներէն սթափեցնելու կառավարութիւններէն անոնք որ քիչ շատ կ'ամփնան իրենց արժանիքէն: Ի՞նչ կ'արժեն այսքան մեծածախս գումարումները, դըղըրուն վիճարանութիւնները զիտանագիտական, արգար սրտում մը խըմբագրելու համար, եթէ այդ սրտման ուրիշ ո՛չ նուազ արգար սրտում մը յաջորդէ յարաճուն ու բազմապատիկ յառաջատարութեամբ, և եթէ այդ բոլոր սրտումները մնան մեռած տառ. . . :

Մենք չենք ուզեր քաջալիք ու յորդորներ. մենք ունինք արգէն կարով, և հաստատեցինք թէ՛ մեր դժբաղտութեան մէջ մեր մեծութիւնը պահեցինք: Մեր ուղածը շատ պարզ է, ապրելու իրաւունքը կուզենք մենք. իրաւունքը, զոր չեն մերժեր մինչև իսկ մարդկութեան ստորնագոյն քարիային. մեր հայցածը՝ սոսկ իրաւունքն է Արդարութեան, ինչ որ կը շնորհուի նայն իսկ վատ ու ապիրատ ձևորդապալիս: Ուրեմն սճի՞ր մ'է մտղթել որ ծագէ 14 Յոկտի Արև մը մեր մթին պատթիլներուն խո՞րքը. . . : Արդեօք մեր օրինաւոր ու բանաւոր պահանջումները ձեռք առնելու համար կ'սպասուի որ պետական գահի երկրացունցի մ'երկի՞ւղը յառաջ բերուի:

Շարժումներն ստէյ իրաւայի են. տառապող ժողովուրդն ի՞նչպէս իրաւունք չ'ունենար զայրանալու, երբ կը

տեճե՛ն որ իր չորչարանքները շահագործելու կ'ենեն, բռնակալին ձեռքէն կորզելու համար քարափի մենաշնորհ մը, կամ հողի կտոր մը, և կամ սուկ ժապուէնի մը ծայրը . . . :

Մինչև հիմա ի՞նչ ըրին մեզ համար քանի մը պետական մարդեր, երկու երեք միայն, վար ծռեցան քիչ մը, մեր տանջանքները դիտելու քիչ մը աղմուկ հանեցին ու լռեցին: Վարձուցան ճիշդ այն բժիշկներուն պէ՛տ որ հիւանդութիւններուն մէջ նախապէս այցեզիւր կը խորհին, ախտազննութեան առաջ՝ հիւանդին նիւթահանը կը զննեն և ըստ այնմ՝ կուտան դեղագիրը: Տեսակին մէջ նոյնն եղաւ մեզ ալ: դեղագիրը տուին, բայց կը զրանան տալու դեղերը . . . : Ի՞նչ ա՛նուն տանք հիմայ այս դիւանագիտութեան մեղք՝ հանդիսաւոր վաստիքին կ'անուանենք զանիւ: Այս ամենուն հանգէպ, դարձեալ հաստատեցինք մեր կենսական ոյժն ու գոյութիւնը, հակառակ արեան գետերուն որոնք ողջեցին մեր վառարանները, կանգուն մնացինք դեռ ու կը մեանք, մաքառումի, կենդանութեան ու կորովի հրաշքով մը: Ընչուած ժողովուրդ մը որ դեռ կը զգայ իր առողջ կուրծքին տակ բաբախելը սրտին. պէտք է՛ որ ընկրկի ուէ՛ խոչընդոտի առջև: Հետեապէս դիմեցինք մեր գահիճներուն. մեր գահիճները պատասխանեցին մեզ նորանոր ջարդերով: Ընդհանուր ազգերուն ազազակեցինք. «Գրոսթիւն», հանրային կարծիքը յուզուեցաւ մի քիչ, և ահա հասնք մը մարդասիրութեան, ստիպեց կառավարութիւնները թօթուել իրենց դատապարտե ի թմբիրը: հազիւ թէ ունեցանք ստուերը գահունակութեան, ի վերջոյ բուն գահայումը տրուեցաւ կարմիր Սուրթանին:

Իսկ այսօր հանդիսաւոր առիթ մը կը ներկայանայ, և մենք կը վութանք օգտուիլ: Հին աշխարհին ու նորին մէջ, հայ գաղութները, գրեթէ միևնոյն ժաւանակ, առանց իրարմէ ըւր

ունենալու, առանց նախապէս համաձայնութեան մը, կազմեցին յանձնախումբեր, գրկեցին յարգալիք ուղերձներ խաղաղութեան համաժողովին, իրենց արդար պահանջումներուն գահայումը խնդրելով: Պուկարիայէ յեւայ, Եգիպտոս ուր ո՛չ նուազ թուով հայութիւն մը կայ, ունեցաւ երկու մեծ Միթինկներ, երկուքն ալ խանգավառ, Աղեքսանդրիոյ և Գահիրէի միթինկները, որոնց մասին խօսեցանք նախորդ համարին մէջ:

Մեր յոյսերուն վրայ դադարաւոր մը տուաւ համար՝ ստորեւ կը գնենք ուղերձին հայերէն թարգմանութիւնը:

Տիար Նախագահ խաղաղութեան շամաժողովին. — Ի Ղահէյ:

Գահիրէի հայ բնակչութիւնը, 500 հոգիէ բաղկացեալ ընդհանուր Միթինկ մը գումարելով, յարգանք կը խնդրէ որ Ձեր մախազահած շամաժողովին հաղորդէք ստորեւ նշանակուած մեր իղծերը:

Նկատելով թէ՛ Պէտլիմի Դաշնագրին մեռեալ տառ մնացած Յըրդ յօրուածին հակառակ, այս վերջին քսան տարիներուն մէջ, թուրքիոյ շայոց կացութիւնը փոխանակ բարելաւելու, աւելի ևս վատացաւ, և ի վերջոյ, յանգեցաւ ազգովին ջարդի շրջանի մը, որուն վախճանը չ'տեսնուիր դեռ:

Նկատելով թէ՛ սովը, համրային անպահովութեան բնական հետեւանք, կը շարունակէ տակաւին աւերելու հայկական երկիրն, որ արդէն տառապեցաւ այնչափ անգթօրէն:

Նկատելով թէ՛ այս ամեներէի կացութիւնը՝ միևնոյն վարչութեան ներքեւ ապրած ուրիշ բաղադակից ժողովրդոց օրինակէն քաջալերուող հայերուն մէջ կը սկսի արթնցնել ապստամբութեան ոգին, որուն վախճանը գրեթէ միշտ պատերազմ եղած է ընդհանուր ազգերու միջև:

Նկատելով վերջապէս թէ՛ կանխաձեռած բաշխման թատր եղող շայաստանի արդի կացութիւնը ինչպէս նաև հայկական հարցի լուծման յապաղումէն՝ միջազգային խաղաղութիւնը վրդովող վտանգը, տրամազծօրէն հակառակ են մարդասիրական դիտումներուն, որոնց կը հետաապնդի Ձեզմեկէցութեամ Միջազգային շամաժողովը:

Այս բոլոր պատճառներով՝ Գահիրէի շայ ժողովուրդը, մէկ մասը ջարդերէն

մագապուր ճողոպրած գաղթականներէ
բաղկացեալ ընդ. Միթիմկ գումարելով
բովանդակ հայ ազգին իղծերն արտայայ-
տած կը համարի, հրաւիրելով. Համաժողովին
բարեացակամ ուշադրութիւնը թուր-
քիոյ Հայոց կացութեան վրայ, և թա-
խանծելով որ մուծել տայ մեր երկրին
մէջ, միջազգային համաձայնութեամբ մը,
սեպհական ու ազդուապէս գործնական
միջոցներ հանդարտիկ ու ժիր ժողովուր-
դի մը կեանքն, ինչքն ու պատիւն ապա-
ստովելու համար:

(Մտորագր. նախագահ):

Այս է ուրեմն մեր պահանջածը,
կեանքի, ստացուածքի և պատուի ա-
պահովութիւնը, ինչ որ խոստացած
ու արինտա ձեռքով ստորագրած է
Սովետներ, ինչ որ վաւերացուցած ու
կրկնակի երաշխաւորած է Եւրոպան,
և ինչ որ կ'ազդակեն քսան տարի-
ներէ ի վեր հայ քաղաքներն արիւ-
նողոյ, ինչ որ կը ճչին ու կը գոչին
օրօրոցի երախանե՛րը որբայած ու ինչ
որ դողդոջաձայն կը հեկեկեն որդի-
ներն ու թոռները կորուսած անդա-
մատ ու զառամած ծերե՛րը, ալևոր-
ները՝ գերեզմանի եզերքէն . . . :

Հապա ո՞ր են մեր յայտերը որով՞
կը սպասենք այդ յայտերու իրագոր-
ծումը . . . : Ռուսիայէ՞ն՝ որ այսօր Ֆին-
լանտիոյ ունեցածն ալ առաւ ձեռքէն.
Աւստրիայէ՞ն որ իր ներքին երկպա-
ռակութիւններուն մէջ կը թապլակի.
Իտալիայէ՞ն՝ որ իր Մեծ-Տէրութիւն
տիտղոսը պահելու համար ինքզինք
կ'ուտէ և որուն անտեսական տագնապ-
ները թոյլ չեն տար իր դէպ ի մեզ
տաժած ասպետական տենչերուն յա-
զուրդ տալու. Գերմանիէ՞ն որ Հա-
յաստանի դեռածուխ աւերակոյտին
վրայ իր սովորուկ գաղթականները
կ'ուզէ տեղաւորել. Ֆրանսայէ՞ն որ
քառօրդ դար է Ալգաս-Լօրէն կը պո-
ւայ, որ Տրէյֆիւսով կը բզկտուի, որ
Հանօթօցի նման բաշաներ կը հանէ . . .
վերջապէս Անգլիայէ՞ն որ իր հարա-
զատ Իռլանտացի ճորտերը չուզեր
կամ չ'կրնար ազատել յախտենական
Լորդերուն ճանկերէն. . . : Է՞ն ուրեմն,

այդ Մեծերէն բան մը յուսալ՝ յի-
մարութիւն է հիմա. բայց ո՞վ պիտի
պաշտպանէ մեր դատը, որ դատերուն
արդարագոյնն է. ո՞վ պիտի մարտն
սոյ մեր յայտերուն ու երազներուն,
որոնք սակախ պատկուելու արժանի
են . . . : — Մեր պաշտպանը՝ մեր ի-
րաւունքն է, մեր անունդն ալ՝ մեր
յայտերը. իրաւունքը մե՛րն է, ջանանք
ուրեմն այդ իրաւունքն յարգել
տալ :

Մեր դատին գոյութիւնը կ'արդա-
բանայ տիրապետող բարբարոսութեան
տեսականութեամբը, անոր յաջող ելքը
կախում ունի մեր ժողովուրդին,
այսուհետև աւելի գիտակցաբար գոր-
ծունէութենէն : Յեղափոխութիւնը
— ո՞վ կրնայ հակառակը պնդել —
միակ ոգիդ ճամբան է մեր իրաւունք-
ներուն ստացումը. բայց այդ յեղա-
փոխութիւնը, ճնշուած հոգիներուն
առաջին բնազդը, հայաժողովուրդը
ու փրկութեան խարխիւրը, պէ՛տք է
հաշտ ընթանայ ժամանակին, միջա-
վայրին ու հանգամանքին հետ. եթէ
մեր ներքին խփակումն յժերը կըսենք
և ամփոփենք, եթէ ներկայացած ա-
ռիթմերէն օգտ յիլը մեզ սկզբունք
ընտրենք, եթէ միջավայրի պահան-
ջումներն ու պայմանները լաւ սեր-
տենք ու անոնց գործադրութեան մէջ
ուզգամութիւն, վտանգի պատահա-
կանութեան դէմ՝ լուրջ հանդար-
տութիւն ցոյց տանք, եթէ կուսակցու-
թիւններուն ու իրենց դաւանանքին
վերլուծումն ընելէ և լաւագոյնն որո-
շելէ ետք՝ չ'երկայինք մեր հետեւիլիք
ճամբան բռնելու. եթէ մեր ներկայ
սերունդը, փոխանակ գաղթային հո-
սանքէն ընդքարչուած, օտար կեդ-
րոններու մէջ փճանալու, նոյն այդ
կեդրոններուն մէջ հաստատէ միու-
թեան կապեր ու միշտ պահէ սեւեռ
գազափարը. «Վերադարձնալ Հայրե-
նիք», եթէ մեր փոքրիկները՝ փոխա-
նակ օտարներուն գիրկը յանձնուելու,
զուտ ազգային դատտիրարակութեամբ
զարգանան. եթէ մեր նորեւել ազ-

նրաչափքները գէթ իրենց գըմնածն
 բեղայրներէն ամէնալով՝ իրենց փառքը
 փնտռեն ո՛չ թէ իրենց շուշրուած վը-
 քոցուոյց ամականներու, այլ իրենց
 ազգօշուա գործունէութեան մէջ. եթէ
 վերջապէս, ամբողջ Հայոց թիւնն ան-
 կասկած վերաբերուի գէպ ի ճշմարիտ
 Հայրենասիրութիւնը, գէպ ի սուրբ
 Յեղափոխութիւնը. ո՛յն ատեն մենք
 ալ իրաւունք կ'ունենանք յուսալու ա-
 ւելի քան երբէք, մեր յայտերն ո՛յն
 ատեն կ'ըլլան բեղուն ու հաստատուն
 մէկ անգամ՝ ներքին ուժերով զինուե-
 լէ ետք, գժուար չէ՛ գտնել արտաքին
 նեղուկ մը. եթէ հին Եւրոպան անտար-
 բեր է, Եւրոպայէն հեռու, Ովկիանոս
 ներքէն անդին ու իշ Եւրոպա մը կայ,
 նոր ու հզօր Եւրոպան, որ ջախջա-
 խեց Միջին դարու մարմնացեալ Սպա-
 նիան ու կենդանացուց Քուպան. նա
 որ փորձով գիտէ յարգն ազատու-
 թեան, ազգերէն վեհագոյնն ու պատ-
 կառելին է նա: Ահա՛ այդ մեծ Ազգն
 է որ պիտի ցոյց տայ վերջապէս
 թէ՛ ի՛նչպէս կը պաշտպանեն բռնա-
 բարուած իրաւունքը, թէ՛ ի՛նչպէս
 կ'ազատագրեն անմահ Ազգ մը, որ
 ազգերուն մէջ նահաճակ տիպոգոն
 ունի, իր դարաւոր չարչարանքներէն
 ժառանգած . . . :

խ.

Զ Ո Յ Գ Ը

Ա.

Ահա՛ ելայ դուրս խցկէս,
 Ծրծել օդոյ շուռնչ մը կէս,
 Դիտել կարմիր վերջալոյս,
 Կարճ ըզբօսանքն եղկելւոյս:

Մակայն աչացրս թշուառ՝
 Զոյգն ըսպիտակ սիրավառ
 Զարկաւ. դարձայ սև ածուխ
 Որ կը մըխայ թամբրածուխ:

Սիրահար զոյգը աղաւնեաց
 Կը թառի վրայ սև տանեաց

Որոց մերթն շատեր կամ
 Արգելափակ ինձ նըմամ.

Զիւնավետուր, թըխաթն,
 Մաւառնելով, ո՛հ, թեթն,
 Կուզայ կ'իջնէ ամեն օր
 Որմին վըրայ մենաւոր:

Անիծեալ որմը բամտիս
 Ուր կը հիւծիմ վտարանդիս
 Մի՞նչդեռ գլխուս իմ վերև
 Զոյգն առնու և աայ բարև:

Աղաւնեկացդ ընտանի
 Տեսքն առնու զիս ու տանի
 Դէպ ՚ի խորերն անցելոյս
 Ուր պլպլայ իմ կէս յոյս:

Բ.

Գգուանք, փարուամն ու տարփամք,
 Աւտնց դոցա, մո՛ւլթ է կեանք.
 Ուրեմն ո՛վ զոյգ անարատ
 Չայելեցէ՛ք յորդառատ:

Փայփայեցէ՛ք դուք զիրար
 Ամենդ ամուլ սիրահար,
 Միրեցէ՛ք և մի երբէք
 Դադարի՛ք, ո՛հ, փարեցէ՛ք:

Բայց, ձեր սիրոյն, ինձ ըսէ՛ք
 — Թէ երբէք ձայնըս լըսէք—
 Ո՛ւր է ձեր բոյնն և է՞ր դուք
 Այս պահուն զայն կը թողուք:

Մի՞թէ դուք ալ ունիք աէր,
 Որ ձեր թևքն է մկրտաներ,
 Ու մէկ երկու աւլով կուտ,
 Շղթայ դրած է ռաներուդ:

Միթէ բամտէ խոյս աըւած,
 Վիրաւոր ու վշտամած
 Իմ քովս յաղե՞րս եկած էք,
 Ա՛խ զիս ազատ կը կարծէք:

Կա՛մ թէ, ո՛ զոյգ բարեկամ,
 Գոնէ օրը մէկ անգամ
 Ինձ այցելե՛լ ըրիք ուխտ
 Ըսփոփելու զիս պանդուխտ:

Գ.

Ողջո՛յն ձեզ տամ, Զոյգ սիրուն
 Զեր տեսք կ'ազդէ ինձ անհուն
 Սէր ու կարօտ, իղձ և յոյս
 Մթնած սրտումս հեղու լոյս:

Աղանակերս Սուրբ Հոգին
Ձէ՞ր որ անգոյ Անդռնի
Խորն հոսեցուց կեանսի շունչ
Եւ լուռ ջրերուն տուաւ մոռննչ։

Աշխարհակալ Ջրհեղեղէն,
Երբ մեռաւ շունչ հողեղէն
Չ'եղա՞ւ մոյեան աղանեակ
Աւետարեւ մի հրեշտակ։

Յորդանանու երբ ի ծոց
Մըտաւ Աստուածն աստուծոց,
Ձէ՞ր Աղանի Ս. Հոգին
Միջնորդ երկրի 'ւերկնքին։

Դո՛ւք ալ, բաղձանքն իմ հոգւոյն,
Լուսերա՛նից իսկ համգոյն
Եկած էք ինձ աւետել
Թէ ազետիցս հատաւ թել։

Երեկոյին իմ հիւրեր,
Բարեաւ իմ քոյս էք եկեր.
Դուք իմ բաղդին դըժմդակ
Հաշտութեան էք նշանակ։

Բայց մի՛ յամէք, վերստին
Դարձէ՛ք ի ծոց ձեր բամտին,
Ձի մի՛ գուցէ բիրտ բազէ
Ձեր ետեւէն վազվազէ։

Թէ՛ քուն լինիք թէ՛ յարթմնի,
Ձեզ միշտ վըտամզ դարանի.
Թէ՛ լոյս լինի և թէ՛ մուլթ,
Ձեզ կ'ըսպառնայ մահ անգուլթ։

Իսկ կա.հարին տակ կապոյտ
Երբ սըլանաք 'ի պըտոյտ,
Յիշեցէ՛ք զիս, 'ի բամտին
Ձեզ սիրահար վտարանդին։

24/8/93

Ս. ԲԻԻՐԱՏ

ՄԵՐ ՊԶՏԻԿՆԵՐԸ

«Կ'արժէ՞ միթէ՛ խօսիլ կամ գրել
պզտիկներու վրայ այսպիսի ժամա-
նակ մը՝ ուր այնքան մեծ դէմքեր
մեծ տեսարաններու վրայ կ'երևին և
աշխարհի ուշադրութիւնը իրենց վրայ
կը հրաւիրեն»։ այս կամ՝ ատոր նման
խորհրդածութիւն մը պիտի անցնի
անշուշտ ընթերցողի միտքէն՝ տես-
նելով որ պզտիկներով զբաղելու
ժամանակ ու սիրա ունեցող միամիտ-
ներ կը գտնուին եղեր տակաւին այս
մեծ դարավերջի պահուն։

Երեցէք ինձ յայտնելու որ ի՞մ

մտածման եղանակը քիչ մը կը տար-
բերի խորհրդածութեան այս ընդհա-
նուր ձևէն, և եթէ մինչև իսկ միս
մինակ գտնուի՞մ անոր դէմ, տակաւին
բաւական զօրաւոր պատճառներ ու-
նի՞մ պնդելու այն գաղափարին վրայ
թէ՛ անխաիր ամեն ժամանակ և ա-
մեն պարագայի մէջ պէտք ունինք
մեր պզտիկներու վրայ խորհելու,
խօսելու, գրելու և անոնց ապագայի
խնդրով զբաղելու։

Ձէ՛ մի որ այսօրուան պզտիկը
վաղուան մեծը պիտի ըլլայ, և այդ
պզտիկը հանճարի, մեծագործութեան
սաղմն է որ տակաւ զարգանալով՝
ի յայտ պիտի գայ ապագայ մեծին
մէջ իր բովանդակ ուռճացումով։

Անէ՛ծքէն աւելի խիստ բան մը կը
ծանրանայ ուրեմն անոնց վրայ որոնք
տգիտութեամբ կամ անտարբերու-
թեամբ թոյլ կուտան որ խամրի
չորնայ այդ նորածիլ բողբոջը, փո-
խանակ աշխատելու որ՝ աստիճանա-
կան զարգացումով՝ հասնի այն իր
կատարեալ փթթումին։

Ուրեմն ըսած է. «Անցեալին մէջ
ունենալ հասարակաց փառքեր, ներ-
կային մէջ՝ հասարակաց կամք մը,
մեծագործութիւններ կատարած ըլլալ
միասին և փափաք ունենալ դեռ կա-
տարելու, ահաւասիկ էական պայ-
մանը ժողովուրդ մը ըլլալու»։ Որ-
քան ճշմարիտ են ֆրանսացի մեծա-
նուն իմաստասէրին այս խօսքերը,
այնքան ճշմարիտ է ըսել թէ՛ լաւ
դաստիարակուած, ընտիր նկարա-
գրով պատրաստուած մանկութիւն
մը՝ հիմնաբարն է ժողովրդի մը կազ-
մակերպութեան մեծ շէնքին, ու այս-
պիսի զօրաւոր հիման մը վրայ հաս-
տատուած կազմակերպութիւնէ մը մի-
այն կարելի է սպասել հասարակաց
փառքեր, հասարակաց կամք և մե-
ծագործութիւններ կատարելու փա-
փաք։

Ու հիմա որ ամենուս աչքը ու
սիրտը սեւեռած են մեծ յոյսերու,
արգար իզձերու մտաուլուս իրակա-

նացման, և ազգային ազատագրութեան անուշ հեռապատկերը այնքան մօտ կ'երևի մեզ, կ'արժէ որ անգամ մը անդրադառնանք մենք մեր վրայ՝ խորհելու համար թէ մեր արդարացի ակնկալութեանց պատկան համար հաւաստիքի ինչ բաժին ունին մեր պզտիկներու մասին տարուած իննամբը ու հոգածութիւնը՝ ուրիշ կարգի այնքան զօրեղ ջանքերու ու զոհողութիւններու քով:

Յոյժ աննպատակ և վարանտ պատասխան մ'ունի մասնաւորապէս Եգիպտոսի հայ գաղթականութիւնը՝ այս հարցումին դէմ: Իրաւի, շատ թոյլ և շատ թեթիւ է իննամբը զոր կը տանինք մեր պզտիկներու համար և անխոյժ ենք զգալու ծանրութիւնը մեծ պատասխանատուութեան զար ունինք հանգէպ ազազայ սերունդին, և այս սերունդը չ'պիտի վարանի ի տես մեր անորակելի անտարբերութեան՝ դատապարտութեան խարանը գրոշմը որ մը մեր ճակատին:

Արհամարհուած, անկարևոր, մեր սամբողջութենէն, մեր էութենէն անջատուած կորուած մարմին մը կը նկատենք պզտիկները որոնք կ'աճին կը մեծնան անգիտակից, աննպատակ դաշտային անմշակ վայրի բոյսերուն նման՝ արևին ու անձրևին ներգործութեամբ, անպաշտպան, լքուած ու զրկուած մեր անմիջական հոգածութենէն, մեր գուրգուրանքէն:

Իրերու այս ցաւալի վիճակին պատասխանատուութեան մեծ բաժինը կը ծանրանայ՝ ըստ իս՝ ո՛չ այնքան վարչական մարմիններու, կրթական պաշտօնէութեանց, ո՛րքան ծնողներու, մանաւանդ զաւակի տէր ծնողրու վրայ, և ես որ հայր եմ 6—8 տարեկան երկու մանչ զաւակներու, բացառութիւն չեմ համարիր ինքզինքս ծնողական այս ընդհանուր անտարբերութեան մէջ, և նոյն իսկ իմ զաւակներու կրթութեան հոգը և այս մասին տիրող ցաւալի անտարբերութեան զարման մը գտնելու փոփոքն

է որ թելազրեցին ինձ այս քանի մը սողերը գրելու և հանրութեան ուշադրութիւնը հրաւիրելու անոնց վրայ:

Մօտաւորապէս երեք տարի առաջ երբ Պօլսոյ մեծ Պանգան օդը հանելու հերոսական փորձերը կրնէին քանի մը մեծ մարդեր, անդին իմ պզտիկ խանութս՝ որ ընտանիքի մը ապրուստը կ'ապահովէր, թուրք խուժանին ձեռքով աւարի կը արուի և հազիւ կեանքս փրկած՝ կնոջս և երկուս զաւակներուս հետ շունչս Աղէքսանդրիա կ'առնեմ՝ գրեթէ միսիրի վրայ նստած: Բայց մի՛ վախնաք, իմ մօրէ մերկ վիճակիս մէջ բաւական հպարտութիւն ունէի ո՛չ Աղէքսանդրիա և ո՛չ Գահիրէ գաղթականաց նպատամատոյց յանձնախումբերուն առջև չ'ծռելու և ո՛չ ալ պատառ մը հացը ուտելու ազգին. ընդհակառակը քարէ քար զարնուելով, պզտիկ գործերու զիջանելով՝ յաջողեցայ միջոցը գտնել իմ և ընտանիքիս օրապահիկը ճարելու, և այսօր շնորհիւ տուտն և անվհատ յարատեւութեան մը կրցած եմ՝ քիչ շատ կարգի գնել գործս և ընտանիքիս ապրուստը ապահովել:

Սակայն օրական հացէն սւելի զաւակներուս կրթութեան հոգը մտաւանջութիւն կը պատճառէր ինծի. արդէն ամիսներով զպրօցի վարժապետի ու վարժուհիի երես տեսած չ'ունէին, և իրենց սորված քիչ մը բանն ալ դժբաղդաբար վրայ սուած էին՝ Պօլսոյ մէջ կատարուած մեծ գործերու երեսէն: Ուստի Գահիրէ սուր կոխելուս պէս առաջին գործս եղաւ պէտք եղած ձեռակերպութիւնները կատարելով ազգային վարժարանը տանիլ երկու զաւակներս: Բայց մերժուեցան իրենց տարիքի փոքրութեան պատճառաւ՝ ըստ կարգադրութեան և ըստ բարձրագոյն հրամանի մեծ աղայի մը որ՝ ինչպէս յետոյ լսեցի՝ զժբաղդաբար արտօնութիւն ունի եղեր ազգային ամեն գործերուն

մէջ քիթը խօթելու, և որ՝ թրքական գոնհիկ ոճով մը՝ արգէն ճամբել տուեր է ուրիշ շատ պզտիկներ ալ:

Հիմա տարիէն աւելի է որ հին Առաջնորդարանի մէկ երկու սենեակներուն մէջ լեցուած են 71—80ի շտի պզտիկներ՝ մանչ և աղջիկ խառն, 5—7 տարեկան, որոնց մէջ կը գըտնուին նաև իմ երկու զաւակներս. այսչափ բազմութիւնը յանձնուած է միակ վարժուհիի մը հսկողութեան. ամեն օր կանոնաւորապէս կ'երթայ ու կուզայ պզտիկներու այս բանակը. հարցնող փնտռող չի կայ թէ ի՞նչ կ'ընեն, ի՞նչ կը սորվին անոնք, և այս կանոնաւոր այլ իսկապէս ապարդիւն երթեկէն ծնողները կա՞մ մայրերն են միայն որ կը շահին՝ իրենց զաւակաց պատճառելիք օրուան անհանգստութիւններէն և սրտնեղութենէն ազատ մնալով. իսկ պզտիկները քերական պատուելէ, ժամերով արձանի պէս լուռ ու անվարժ նայելէ, ուտելէ խմելէ զատ ուրիշ բան չեն ըներ, և այս այսպէս կը շարունակէ անփոփոխ շաբաթներ, ամիսներ ու տարիներ:

Բայց մինչև ե՞րբ պիտի տևէ այս ցաւալի վիճակը մեր պզտիկներուն, մինչև ե՞րբ պիտի թողունք այսպէս անգլխօրէն որ արևազուրկ թօշին մեր նորաբողբոջ ծաղիկները: Ինչո՞ւ մինչև ցարգ Գահիրէ ունեցած չ'ըլլար իր կանոնաւոր մանկապարտէզը, ինչպէս կան գրեթէ ամեն տեղ. ինչպէս կայ տարիներէ ի վեր մեր քթին տակ՝ Աղեքսանդրիոյ մէջ. ամօթ չէ՞ որ Գահիրէի նման հայաշատ և լուսաւոր կեդրոնի մը մէջ՝ ուր օտար ազգերու ամեն աստիճանի կրթական հաստատութիւնները իրարու հետ կը մրցին, հայ գաղթականութիւնը չ'ունենայ գոնէ օրինաւոր Մանկապարտէզ մը ուր խնամուած հայեցի կրթութիւն մը տրուի մեր պզտիկներուն:

Եթէ տարիներէ ի վեր իրարու յաջորդող վարչութիւնները և վարարարանի հոգաբարձութիւնները ան-

փոյթ մնացին զոհացում տալու այս առաջնակարգ պէտքին. եթէ եկող գացող առաջնորդներ, տեղապահներ, փոխանորդներ՝ աւելի եզրագրական անլիկներ զիջելու և երբեմն ալ՝ պաշտօնէ հրաժարելէ ետք՝ եկեղեցիին հետ քէն պահելու մէթոտը մշակեցին առանց մատչի ծայրով իսկ մօտենալու դաստիարակութեան գործին, զոնէ ծնողները՝ ի սէր իրենց զաւակաց՝ պարտին սթափիլ իրենց երկարատև թնութենէն և պարսաւելի անտարբերութենէն, և աւա՛րց աչք տնկելու ազգային եկամուտներու կամ կտակներու վրայ՝ բանալ իրենց քսակին բերանը և ձեռնարկել մանկապարտէզի մը հաստատութեան, և այսպէսով փրկել մեր պզտիկներու ապագան անխուսելի կորուստէ մը, եթէ չեն ուզեր որ օր մը անանց արդար անէծքները տեղան իրենց գըլխուն:

ՀԱՅՐ ՄԸ

ՄԱՀՏԻՈՒԹԻՒՆ

Քանի մ'ամիս վերջը շէյխ իւլ խօրաչի մեռաւ, Մուհամմէտ Ահմէտ փութաց իր աշակերտներով Մէսալիա երթալ, ուր փառաւոր չիրիմ մը կանգնեց ի յիշտոակ իր ողբացեալ վարդապետին: Իր առաքելութեան ասպարէզը բաց էր այլևս ուր որ երթար, յայտ յանդիման ինքզինքը կը հռչակէր իբր երկնառար ոմն՝ ծառայ Ալլահին, արուպն Մարգարէին: Հետզհետէ Տար-էլ-կէմը, էլ-էպէտ թախալլա, Քօրտօֆան այցելեց ուր ամէն կողմ խուլ ասելութեան մը նորաբողբոջ սրտը կը նշմարէր բնակիչներուն մէջ՝ գէյ ի եզրագրական կառավարութիւնը, որ զերեվաճառութիւնը արգիլած էր և սրուն պաշտօնատան վարչութիւնը, հարկահանները, պաշտպօզուպները և tutti quanti անխնայ կը լլկէին ու կը կեղեքէին զիրենք:

Մուհամմէտ Ահմէտ այս առիթ-
ներէն օգտուիլ ուզեց ու գործել սկսաւ.
Գիտէր որ կրօնով միայն պիտի կա-
րենար ի մի ձուլել այս ամեն ցան-
ցաւ դժգոհ ցեղերը, ուստի ինքզինք
«Մահաի իւլ Մունթազար» անուա-
նելու բնաւ չ'վարանեցաւ, ինք որ
փառաւորութիւն կատարի մարմաջէն
բռնուած էր:

Իր կիսովին զաղտնի ապստամ-
բութեան շշուիւր երբ կառավարու-
թեան ականջը հասաւ, խաչովուսի
քաղաքագետը, Բաուֆի փաշա, լուր
զրկեց իրեն որ խարթուի գոյ և
ինքզինքը արդարացիէ իր մասին ե-
զած ամբաստանութեան վրայ, ճըշ-
մարիտ թէ սուա ինչ որ ալ ըլլայ:

— Ինչ, պատասխանեց պատգա-
մաւորին, շնորհիւ բարձրեալ Աստու-
ծոյ և Մարգարէին՝ ես եմ քաղաքին
տէրը, ու ես խարթուի երթամ անձա
պաշտպանելու անպիտան ֆաւրներու
առջին, հա՛ հա՛ . . . անկարելի բան:

Խեղճ պատուիրակը զարմացաւ
շուարեցաւ այս յանդուզն պատաս-
խանին վրայ, և զգալով որ զանի
զգաստացներու ջանքերը ապարդիւն
պիտի մնան, չարաղէտ գուժիան՝ վե-
րադարձաւ ի խարթուի և Մուհամ-
մէտ Ահմէտի բացարձակ նպատակը
զեկոյց կառավարութեան՝ ուր իրա-
րանցումը սկսաւ, մինչդեռ պատգա-
մաւորի մեկնումէն վերջ Մուհամմէտ
Ահմէտ հասկեցաւ որ այլևս միջոց
կորսնցնելու չ'էր և թէ ապագան ներ-
կայէն կախեալ էր: Առանց վարան-
ման, կրօնամորութեամբ կուրացած,
մարգարէաշունչ թուղթեր գրեց Սու-
տանի չորս կողմը, հրաւեր կարգաւով
հաւատացեալներուն որ կառավարու-
թեան դէմ գնեն՝ մինչ ինք իրեննե-
րով ձեկնուի (կրօնի պատերազմ) կը
պատրաստուէր:

Դրկուած մէկ երկու առաջին ար-
շաւախմբերը ինչ ինչ պատճառներով
անյաջող եղած ըլլալով՝ կառավար-
ութիւնը հասկեցաւ կացութեան ծան-
րութիւնը ու լուրջ արշաւանք մը կազ-

մակերպեց Եուսուֆ փաշա Շէլլալի
հրամանատարութեան ներքե:

Արշաւախումբը, թիւով 6000, հե-
տեակ և հեծելազօր, 1882 Մարտ
13ին խարթումէ մեկնելով՝ Մայիսի
սկիզբները Ֆաշոտա կը հասնէր:
Սակաւօրեայ հանգիստէ մը վերջ,
յունիս 6 երեկոյեան դէմ՝ բանա՛-
կած էր ի Մեղաթ՝ կէպէլ-կէտիտի
մօտ, յաղթանակին վրայ նախապէն
վստահ: Ապտալլահ վատ-Տա-Ֆուլլա,
արշաւախումբի գլխաւորներէն մին
առարկեց թէ վտանգ կ'սպառնար
իրենց, և այս բանին համար կը յիշէր
որ էլ-Օպէտէ զացած պահուն՝ ե-
րկվարէն վար ինկած էր, ինչ որ
չարագուշակ նշան մը կը համարուի
Սուտանցիներու քով: Բայց այն ա-
մայի վայրերուն մէջ այնպիսի տագ-
նապալի օրեր, ոչ ոք ականջ ունէր
նախապաշարուսներու մեծ հաւատ
ընծայելու: Այսպէս՝ այն ինչ եզրիպ-
տական բանակը անպատրաստ ու
խոնջեալ՝ գարիպաի (ցանկապատ)
մը մէջ ամփոփուած հանգիտա կ'առ-
նէր՝ սպառած ուժերը վերանորոգե-
լու համար, արշաւայտի ծագման հետ,
Մահաիականաց հրոսակը, սովալլուկ,
կիսամերկ ու արեանծաշաւի, յանկար-
ծական յարձակում մը ըրաւ անօր
վրայ և ամբողջովին բնաջինջ ըրաւ
զայն: Եուսուֆ փաշան և իր թիկ-
նապահներն իրենց վրաններուն դուռը
սպաննուեցան, կենդանի մարդ չ'մնաց:

— Երբ խաւարամած վայրենի եր-
կիրներու մէջ, կ'ըսէ հեղինակաւոր
եւրոպացի մը, կոյր մուլեառնութեան
հետ կապ ունեցող զէպք մը տեղի
կ'ունենայ, գերբնական բանի մը՝
հրաչքի մը կերպարանքը կ'առնու
բնիկներու մէջ: — Այս հրաչքը կը
բաւէր այդ կրօնամուլ շէյխին՝ Մահ-
աի-էլ-Մունթազարի տիտղոսը իւ-
րացնելով փառաւորութիւն հոգեւորա-
պէս թէ մարմնաւորապէս: Պահ մը
հանգարտած և անվախ՝ ժամանակն
էր այժմ իր թերի կողմերը ուսում-
նասիրելու. հաւաքած էր դրամ, տե-

սակ տեսակ զէնք և աւար զորս ի ձայն թմրկի և սրինգի առատաձեւնորէն կը բաշխէր իրեն գիմող ցեղերու պետերուն: Այլևս կասկածելու տեղի չ'ունէին ասոնք, նա էր ակնկալեալ Մեսիան, ճշմարիտ Մահաին, երկրային փառք և հարստութիւն անարգողը: Եւ ամեն կողմերէ ասուածաւսէր հաւատացելոց բազմութիւնը կը խռնէր անոր մօտ, սուրբ մարդուն քղանքքը համբուրելով օրհնութիւնը առնելու և ձէնասին մասնակցելու համար:

Հարաւային Քորնոֆանի ապստամբութենէն վերջ ուրիշ ուրիշ ընդհարումները յաճախադէպ եղան որոնց մէջ երկու կողմանէ կերուտար մեծ էր, մերթ կառավարութիւնը՝ մերթ Մահաին էր յայլթողը:

Էլ-Օպէտէ վերագառնալու պահուն Մահաին իր հեռուորդներէն մին Տէլէն զրկեց հսն դանուող վանականները սպաննել տալու և կամ գերեվարելու համար: Այստեղի կաթովիկ միսիոնարներէն՝ Ճօզէֆ Օրհալտէր, հանրածանօթ իր գերութեան և փախուստի արկածներով և լուծի Պօնամիօ՝ սրոշած էին զօրախմբին հետ բոլոր վանականներով մէկտեղ Ֆաշտա փախչիլ, այլ ափսոս որ նպատակին չ'կարողացան ի գործ գնել տեղւոյն կառավարչի երկչոտութեանը պատճառաւ: Ուստի հարկադրուեցան անձնատուր ըլլալ, կալուած և ստացուածք, ամեն ինչ կողորտուեցաւ և իրենք գերի բռնուած էլ-Օպէտ վրկուեցան: Մահաին և իր խորհրդական փոխանորդը շատ ջանացին զանոնք և քոյրերը կրօնափոխ ընելու, այլ ի զուր. խոստում կամ օգուտնալիք բնաւ ազդեցութիւն չ'ըրին անոնց վրայ: Քրիստոսի արժանի այս անձնուրաց աշակերտները երկնային հաստատամտութեամբ մերժեցին անոնց բոլոր առաջարկները, յանձնառու ըլլալով ամեն ամեջանաց, ու նախադատիւ համարելով նահատակուիլ Յիսուսի սիրոյն համար

քան թէ ընդունիլ պիղծ ազանգի դաւանանքը:

Ասոնց էլ-Օպէտ ժամանումի յաջորդ առտուն՝ հազարաւոր Տէրվիչներ խմբուած էին լայնատարած վայր մը՝ ուր ցուցահանդէս մը տեղի պիտի ունենար: Օմպոյայներու (չեփոր) թմբուկներու խառնածաղանձ ձայնը, թնդացնելով շրջակայ վայրերը, կ'աւետէր Մահաիի յաղթական գալուստը: Վերջապէս եկաւ, յամբարայլ և փառսպանձ, աջ ու ձախ օրհնութիւն սրբուելով: Քրիստոնեայ կրօնաւորները ի հանդէս բերուեցան, ամեն աչք անոնց վրայ էր, անոնց տեսքը կը բաւէր սեւամորթ վայրենիներուն մտլեանդութիւնը կատարեցնելու: Խեղճ տրարածներ, զինեալ այն անյողզող հաւատով՝ որուն սիրոյն համար յանձն առած էին խաչը հեռուները տանիլ, ուրախութեան արցունք կը թափէին իրենց Գողգոթայի ժամը հասած կարծելով. չէին յուսար որ բաղդը կամ գերագոյն անհաս կախքը այլապէս անօրինաձ ըլլար, զի Տէրվիչները, պարմանայի բան, զինաթափ եղան անոնց քրիստոնէական խոնարհութեան առաջ ու ազատ թողուցին զիրենք, ինտայելով անոնց կենաց, ազատութիւն մը որ քանզմահ նախընտրելի չէր:

(Շարունակելի)

Ս. Օ.

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

(Ե Ա 40)

Դժոխային ծրագրին առաջին յօդուածը գործադրուած էր. բոլոր մանուկները մահացնելէ վերջ՝ կը մնար պահանջել լեռնական աւազակները, ինչպէս որ կը պատուիրէր Արիֆ իր վերջին նամակին մէջ: Մակայն, զեռ չ'մտած յետագայ դէպքերուն պատմութեանը մէջ, պէտք է նախ հաս-

կընալ թէ՛ ո՛վ է Եակօն, որուն համար Արիֆ կը գրէր թէ՛ հաւատարմութիւն ուխտած է, և թէ՛ կառավարութեան հոգին և ոյժն է: Կ'արժէ որ վերլուծենք այդ արարածը, անվիճելի կէտքով հերոսն այս վեպին, որ սակայն վեպ չէ, այլ իրողութիւն:

Բնութիւնը՝ ամենազուարթ հովիտներուն մէջ գրած է հրաբուխն ու հեղեղը, առաջնութեան քով աստը. կեանքին քով մահը, հրէշտո՛ղի՛ն քով՝ դէր, գերազնիւ զգացման — հայրենասիրութեան — քով Աստուած գրած է մասնիչը:

Ախա, մահ, դե, մասնիչ: Մեր Եակօն այս չորսին մարմնացումն ու խառնուրդն է. ընկերային մարմնին ժանտախար. բանտարկեալներուն տեսանելի և շօշափելի մահը, դատարաններուն ու դատաւորներուն դէր. հայրենիքի և ընտանիքի մասնիչը. Եակօյի կեանքին հեղինակը որ ապա իր փաստաբան տղուն տանը ջրկիրն էր, և այդ պաշտօնին մէջ մեռաւ, Եփրատի գետահովիտներէն էր. մայրը, կ'երեւի թէ՛ զանի յզացած Ժամանակ՝ անոր հօրն արոժած եզներուն ու այծերուն շատ նայած է. կ'ըսուի թէ օրին մէկը գետին մացառներուն մէջէն լսուած է առաջին ճիչը, զոր արձակած է Եակօ, աշխարհի ազգաբարեւոյ. համար իր մուտքը. մօրուտներուն ծնունդն է անի: Քիչ քիչ կը մեծնայ, իր թաղին թուրք տղայոց հետ կ'ապրի ու կը խաղայ. անոնց բարքերէն քաղուած բաւական հաւաքածոյ մը կազմած է. այդ բարքերն իր հասակին հետ աճած ու դաճած են, մինչև որ առիթը կը բերէ զանի կը ձգէ կիլիկիոյ մէկ մենաշնորհեալ քաղաքի ծոցը, ուր կ'աշխատուի իրեն տալ այնպիսի կրթութիւն մը որ կարենայ գէթ մասամբ զուգել իր ցեղային ու բնազգային հրէշութիւնները. բայց ի զուր, արևմուտքը դորձ չ'ունէր այդ արևելքի վիժուկին հետ. քանի՛ զարգանար, (եթէ զարգանար

ըսել է կարգ մը նեւթերու մերկնական ու անդիտակից ուսումը, առանց կազմելու ինքնուրոյն նկարագիր մը, առանց ամբարելու մտքի պաշար մը՝) այնքան աւելի կը զարգանային մտլութիւններն իր մէջ, մինչև որ վերջապէս, կ'արձակուի իբրև գող — հոգ չէ թէ պարզ Աւետարանի մը, — Եփրատացին կը վերադառնայ իր բնիկ ծննդավայրը, ուր հազիւ ատեն մը կը մնայ, յաճախելով խօճայի մը քով որ գիւղին անուանի վարպետարուագէտն էր, պակասը հոն կը լրացնէ Եակօ, և ահա՛ կը կանչուի Մ. քաղաքն, ուր կը մտնէ, ուսուցիչ բողոքական հայոց նախակրթարանին մէջ, քիչ յետոյ կուսածաղիկ շէկ ամերիկուհիի մը պատիւը բռնաբարելու յանդգնելով, կ'ատիպուի փախչել կոյտին հօրը շրջահարին գնաակէն, կ'երթայ կ'ապաստանի նոյն քաղաքի կառավարիչին ծոցիկը, իբրև հալածեալ մը իր հայրենակիցներէն ևս և ամերիկացի առաքեալներէն, որովհետև — կը պատմէ — Եւրոպայէն ու Ամերիկայէն ի Հայաստան տարածուելու համար զրկուած փաստակար գրքեր ինք չէր թողուր որ զրկուէին հոն. բարեմիտ կառավարիչը կը զթայ, և երբ Եակօ փափաք կը յայտնէ մահմէտականութիւնը զրկելու, զթութիւնը կը փոխուի դուրս գլուխքի և ի վերջոյ պաշտպանութեան. ուստի, գիշերով կը փախցուի Եակօ կուսակալութեան կեդրոնն ուր կը կարգուի ուսուցիչ կառավարական վարժարանին: Սակայն, տարի մը յետոյ Հայ-պապականաց ջանքերով ու միջամտութեամբ կը դառնայ Եակօն դարձեալ ի լոյս Աստուածգիտութեան, այս անգամ՝ Հռովմայ եկեղեցւոյն գիրկը, և կուտան իբրև աշակերտ տեղւոյն հռչակաւոր մէկ փաստաբանին քով, իրաւագիտութեան հետեւելու: Քանի մը տարիէն կը ստանայ Բ. փաստաբանի վկայականը — ասկէ աւելի գիւրին ինչ կայ թուրքի ոյ մէջ — Կ. Պօլսէն, քանի մը

կառավարական պաշտօնէից կողմէն ստորագրուած նպաստաւոր վկայութեան մը վրայ վկայագիրը կը ստանայ, կը սկսի սողոսկիլ նախնական գատարանի դռներէն ներս. մէկ երկու գատ կը ստաննէ, քիչ քիչ ինքզինք կը յաջողի ծախել. այնպէս որ այս բողոքական — մահմէտական — պապական հուստացեալ փաստարանի առունը կը յեղյեղուի տեղոյն Հայ ընտանեաց մէջ, որոնց ինք ալ դիւրահաղորդ, կը մօտենայ, ծանօթութեան սահմանը կ'ընդլայնէ, և օր մ'ալ ճամբուն վրայ կը հանդիպի աղջիկ մը, որ թէև ոչ գեղանի, բաղդէն օժտեալ, անմիջապէս կը մագնիսէ Եակոյի սիրտը, մտէ քսակ մը որ միայն գրամի գէժ կը տրուի, չը յամէր խնդրելու հօրէն իր սիրածին ձեռքը, զոր հայրը կը խոստանայ տալ իրեն պայման դնելով որ Հայոց եկեղեցիին գիրկը վերագտնուի, և Եակօ, տարի մը շարունակ կը յամախէ եկեղեցին մինչև որ կը պատկուի վերջապէս...

Կայէն, եղբայրասպան, ճակատն վրայ կը կրէ երկնային անէծքին կրնիք. բան մը չ'կրնար սքօղել մատնիչն սրտին մէջ խլրտող զագիր զգացումները, և ո՛չ ալ կրնայ գանի որոշել ամբօխէն: Կրնայ ունեցած ըլլալ ընկերութեան բարձրագոյն կամ նուաստագոյն դիրքերը: Գրուշի, Ֆրանսայի սպարապետն էր Նարօլէօնը մասնազոր. Եակօ՝ վենետիկ աշնուական Մարիտանացիին բարեկամն էր. միակ սև սիրտ մը, որ կրնայ գոյութիւն ունենալ Աստուծոյ ստեղծած բնութեան մէջ, և զորսակայն մարմնաւորեց Շէյքսպիր Եակոյի մէջ...: Դարձեալ, ուամիկ ու գեղձուկ հովիւ մը չէր Լէոնիգասի քաջարի բանակները ձեռք տուողը: Մասնիչը կրնայ ըլլալ արտաքուստ հրապուրիչ, ինչպէս որ վարդերը կը ծածկեն իրենց մէջ փուշեր. թո՛ղ ըլլայ մեծ կամ փոքր, միշտ ախուր է անոր գէրը. մէկ երկու հազարորդաձէթը մեծութեամբ ճճի մը կը

խորամխի կաղնիին սիրտը, կը կրծէ ու կը տապալէ զանի:

Իսկ իր եղբայրները ծախող Եակօն՝ կրծող որդի գձուձ կերպարանն ունէր աւելի: Որդին նման կարող էր սպրդիլ ու սողոսկիլ ամբօխին մէջ առանց նշմարուելու, խայթելով գարշապարէն անոր, որ զանի կը խնայէր ճզմելու սոքերուն տակ:

Ճակատ մ'ունէր հասարակ, քիթ մը հասարակ, բերան հասարակ. ամեն բան անոր մէջ հասարակ էր. բնութիւնը զլացած էր անոր աալու երկու աչք միանգամայն, խնայելով մարդկութեան գրկեալներուն, և չափաւորելու համար չարիքները զօր կրնար ընել անոնց. նայուածքը կեղծ էր և բոցազերկ, ակնոցին ետև թագուն. իր տարածամ հերթաթափը կը մասնէր անոր տուփոտ ու ամօթալի կերքերը: Շրթներուն վրայ կը յածէր յաւերժական ժպիտ մը, որ չէր մեկնուէր, նման ժպտին, զոր Գուբէր կը գնէ իր Կաշիէ Կուշպուլի վէճի հերոսին շրթունքներուն վրայ: Լուսթիւնն էր իր ամբողջ գէնքը: Երբ հարցուէ՛ր մ'ուզուէր իրեն, ինք, կը զիտէր տարտամին մէջ, միշտ ժլպտուն: Նանրահատ մարդիկ կ'ըսէին. «Խիստ ուժով մարդ մ'է»: Օր մը մէկն հաստատեց թէ՛ ապուշ մ'էր ան: Երբ գոնուէր պաշտօնի գլուխ, ոչ ոք կրնար կարգալ իր դիմագիծը: Ամեն մարդու ներելի էր բան մը կարծել զանի. օրինակի համար, բըժիշկ, փաստաբան, գատաւոր, սեղանաւոր, կամ պարզապէս մակարոյժ մը: Կարելի էր հարցադիործել զանի ամեն բանի մէջ, հանրագէտ էր, կը լսէր, կը ժպտէր, կը խմբագրէր զեղագիր մը կամ խորհրդակցութիւն մը. իսկ վճարալզը ներկայելուն մէջ՝ իրեն հաւատարող չ'կար:

Երբ Հայերը, թուրքերէն նեղուած, կողոպտուած, շարզուած, ուղեցին դիմագրութիւն մը կազմակերպել, զիպուածով ինք եղբու սուսթիւնն որ ժամագրավայրը եկաւ ինքնակոչ:

ԼՐԱՔԱՂ

Հարցուցին իրեն. ո՞վ ես դուն. պատասխանեց ժպտելով. «Հայրենասեր»:

Այս լակոնական պատասխանին վրայ կործեցին տեսնել անոր մէջ վեհ զգացումներու գրոշմը, ազնիւ մտածումներու ցուրը, հպարտ հայրենասիրութեան մը արտայայտութիւնը: Քանի մը խոհականներ միայն դիտեցին զանի ու կասկածեցան...:

Վիճարանութեանց խառնաձայնութեան միջև ինք լսկ կը լռէր. կ'ըսէին կը խորհէ. ո՛չ, չ'էր խորհեր, կը լռէր, որովհետև ըզեզը դատարկ էր պարզապէս: Քիչ մ'ալ զինք մտիկ ընէնք: Վճռական գործողութիւններուն ասան, երբ քանի մը կռուող խումբեր կազմուեցան, և երբ թուրք վաշտերը մտնեցան և Հայերը նպատատուր դիրքեր ընտրեցին, ինք միայն չ'շարժեցաւ տեղէն. Ստոյիկեան մը կարծուեցաւ: Արդ պատահեցաւ որ օրին մէկը մարտիկներու միջև գտաւ զինք, մէկ սուքն Հայաստան ու միւսը թուրքի: Ահա՛ իր Ստոյիկեան ընթացքին մեկնութիւնը: Այսպէս կըրցաւ հայրենասիրութեան կերպարանքը հագնիլ, քաջալերելով մէկ կողմէն զոհերը, միւս կողմէն ալ բռնցի հրելով գահիճները զոհերուն վրայ:

Ամեն ուրեք կը հանդիպէին իրեն խափանարար ոչնչութեան: Ամեն տեղ կը տեսնէին զանի: Ստուերի մը պէս յանկարծ երևան կենէր, առանց ոչ ուրեք նշմարուած ըլլալու: Եւ իրօք, այս մարդը՝ ստուերներէ շինուած էր, ո՛չ մի ֆիզիքական, բարոյական և իմացական իրականութիւն. ոչինչ էր, ստուեր մ'էր մասնիչի վրայ ձգուած, հազիւ կը տեսնուէր ստուերը, բայց կը բուէր սքօղիլու այն գարշելի անձնատուրութիւնը: Ասի կը պահէր անի, և անի՛ կը կորսուէր՝ տարտամին մէջ: Մինչև այսօր ո՛չ ոք կըրցած է թափանցել անոր խորը. ա՛յսպէս եկած է, այսպէս կ'երթայ և ա՛յսպէս կը չափէ գառարանի սրահները...:

(Շարունակելի)

— «Եզիպտահայ միևնույնըր հանգուցեալ թագուր փաշան, ինչպէս հաղորդում են վերջին լուրերը, իւր մահուան միջոցին 15000 ոսկու մի գումար է նուիրել ազգային կրթական մի հաստատութիւն հիմնելու համար: Այս առթիւ, որովհետև կուսկի գործադրութեան պայմանաժամը որոշուեր է կատակատարի կողմից, «Բիւզանդիոն»ը մի նկատողութիւն է անում Կ. Պօլսի Պատրիարքարանի ուշադրութիւնը հրաւիրելով վերոյիշեալ խնդրոյն վրայ»:

ՆՈՐ-ԴԱՐ

— «Կրօնիկի (Մուշ) մէջ, 8 Հայ գործիչներ զօրքերու վրայ յարձակելով, յիսնուպետ մը և հանրային պաշտօնեայ մը վիրաւորեր են: Զօրքերը նոյնպէս յարձակելով 8մ ալ սպաններ են: — Պիթլիսի մէկ գիւղին մէջ Հայերը հիմգ թուրքեր սպաննած են. այս պատճառաւ ձերբակալուեր են եօթն Հայեր»:

— «Հայ գաղթականներու հայրենիք վերադարձի նկատմամբ Բ. Դրոն հետ բանակցութիւնները յետաձգուեր են մինչև Պ. Ջենովիէվի վերադարձը: Կ'ըսուի թէ Ղիէննայի նախկին դեսպան, Ջիա փաշա, Զարին դրկուելիք պաագամտուրութեան մը գլուխ նշանակուած է, Մուլթանի կողմէ խնդրելու համար որ Հայ գաղթականներու հայրենիք վերադարձը պահանջելէ հրաժարի»:

ԳՈՒՌԻՔ ՏԷ ՊԱԼՔԱՆ

— «Մայիսի 30ին ուսուցիչ Տ. Միմաս Զերագ, ի Ղահէյ քրիստոնեայ երիտասարդութեան կեդրոն տեղւոյն մէջ Հայաստանի և Հայկական կուտորածներուն վրայ պատկերացումներով գումարում մը պարտէր ընել»:

Հոլանտական կառավարութեան թելադրութեամբ, այս ծրագիրը ի դերն ելնել տալու համար, ուտիկանութիւնը վարպետութիւններ քանցուցած է: Քննիչ մը պնդած է թէ նախապէս արտօնութիւն մը հարկաւոր էր քանի որ պատկերացումներ պիտի ներկայէր:

Ստուգութիւնը սա է թէ՛ վեհաժողովի թուրք պատգամաւորներն ա: Ինն միջոց ի գործ դրած են արգիլելու Ղահէյի մէջ Հայ աքսորեալին ծայնը լսելի ընելը: Թուրքան փաշա հեռագրած էր իր կառավարութեան թէ՛ յաջողած էր այս գումարումը արգիլել տալու:

Այս խնդիրը Մալոյ մէջ սաստիկ բողոքներու պատճառ կուտայ, թոյլ չ'տրուելի որ Հոլանտիոյ պէս միակ ազատական երկրի մը մէջ, գումարման իրաւունքին

դէմ ամենապատիկ խոչընդոտ մը յարուցուի նոյն իսկ օտարներու նկատմամբ: Առաջինը, Տակկուս, Լահէյի պահպանողական թերթը խստիւ քննադատած է կառավարութեան ընթացքը:

Յուժիս Լին Տ. Չէրազի շատ մը հոլանտացի լրագրագետներ այցելեցին, պատրաստ իրեն դատը պաշտպանելու: Կուզէր դարձեալ բարիզ մեկնել, բայց վրձնած է մնալ: Չանի թագաւորութեան այլեւայլ քաղաքներուն մէջ կանչելու կը պատրաստուին, արգելեալ գումարումներն ընելու համար:

Տ. Չէրազի այցելեցին նաև ընդհ. Նահագագ ճ անդամներն, ի մէջ այլոց Տօթթ. քուիժքէր, պետ ռամկավարական հակայնդափոխականներու և խմբագրապետ Արսն. Կարսի: Տօթթօրը Տ. Չէրազը ճաշի հրաւիրած է:

Ասիկա խիստ խոշոր միջադէպ մ'է: Արգելուած գումարումն անպատճառ տեղի պիտի ունենայ և արտաքին գործոց նախարար Պ. Պօֆօրի կացութիւնը, արդէն խախտուած, աւելի ևս պիտի վտանգուի թուրք կառավարութեան տրուած այս առանձնաշնորհումներուն հետևանքօք»

ՅԱՐ Տ'ԱԼԷՔՍԱՆՏՐԻ

— «Վերջապէս Տ. Մ. Չէրազ յաջողեցաւ իր առաջին գումարումը կազմակերպել յ'Ամսթէրտամ, խուռն բազմութեան մ'առջև նկարագրելով չայաստանի թըշուառութիւններն ու չայկական կոտորածները»

ԼԸ ԹԱՆ

— Պ. Միմաս Չէրազ որ Լահէյ կը գտնուի, Պալքանեան չայերու ընտրութեամբ, ուզեր է չոլանտայի մայրաքաղաքին մէջ ժողով մը կազմել չայոց վիճակն այնտեղ պարզելու համար: Թուրքիոյ ներկայացուցիչն խնդրանօք չոլանտայի կառավարութիւնն որ թէպէտ ազատամիտ արգիլեր է այն հաւաքումը: Մակայն ազատութեան սովորութիւնք շատ արմատացած են ի չոլանտա և այդ արգելքն ամենու միտն շարժեց: Պետական կուսակցութեան մի աջակց՝ Պ. Լիէֆթիմի և Տօթթ. քուիժքէր՝ պետ հակայնդափոխական կուսակցութեան որ միևնոյն ժամանակ ծայրայեղ ըողորակն մ'է և չոլանտայի ամենամեծ մարդկանց միմ, ըողորեցին, ասոնց միացաւ կաթոլիկ կուսակցութիւնն որ Սենեկին մէջ երեսփոխաններու մէկ երրորդ մասն կը ներկայացնէ: Բոլոր այս երեսփոխաններն Սենեկին մէջ Պ. Միմաս Չէրազի խնդիրն ձեռք առին և ստիպեցին կառավարութիւնն իւր արգելքն ետ առնուլ և Պ. Միմաս Չէրազ իր լսանախօսութիւնն կատարեց:

— Լահէյի Դեսպանաժողովին մէջ, այն մասնախումբն որ պիտի քննէր զէնքերն և ռազմաթերթն, միաձայն հաւանութեամբ (տասն և ութ ծայն հակառակ երեքի) մերժած է տոււմ-տոււմ (dam-dam) կոչուած զնդակներն: Չարմանալի չէ որ Անգղիոյ ներկայացուցիչն այդ զնդակին արգիլման դէմ քողոքած է, վասնզի Անգղիա այս զնդակներէն գործածեց ճնդիկներուն ապրտամբութիւնը զսպելու: Բայց քաղաքակիրթ աշխարհի համար մեծ զարմանք պատճառեց երբ լսեց թէ Աւստրօ-չունքարիա և Անգղիա միացան այդ բանին դէմ բողոքելու համար:

Ա. SAISSY-ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹ ԲԷԿ

ՔԱՂԱ ՔԱԿԱՆ ԿԻՍԱՄՍԵԱԿ

Կառավարութիւնները քիչ անգամ համաձայն կը զանախն ժողովուրդներու խղճին: Այս վերջինն է որ յամբօրէն այլ շարունակ մարդկութիւնը կ'առաջնորդէ դէպ իսէպ մը ազատութեան, արդարութեան և տիրակերական համերայնութեան: Նոյն խիղճն է որ 1789ին, հակառակ ամենազօր թագաւորի մը շանթերուն՝ տապալեց միապետութիւնը և ծնունդ տուաւ ճեղափոխութեան: Գարձեալ նոյն խիղճն է որ կը դահակալէ այսօր Լահէյի մէջ հակառակ կառավարութեանց, և կը ջանայ իրագործել իր իսէպ խաղաղութեան երազները:

Մարդկային խիղճը անվրէպ յաղթանակը պիտի տանի, եթէ ոչ այսօր՝ վազը անպատճառ, կրնաք տպահով ըլլալ ասոր: Յարմէ հետէ խաղաղութեան համաժողովը իր նիստերը սկսաւ, կը տեսնենք վերջապէս թէ իր ջանքերը ինչ տեսակ ծրագրի վրայ կ'ուզուին:

Ամենէն առաջ զարգեցաւ հրազէններու և պայթուցիկներու խնդրով՝ կարգադրելու համար անոնց կիրառութիւնը ցամաքային և ծովային բանակներու մէջ, և ուսումնասիրելու վրայ է այն միջոցները որոցմով կարելի ըլլայ ծովային պատերազմը ենթարկել ժրնէօի Գաշապրութեան

որամանց թեանց . աչքէ պիտի ան-
ցնէ Պրիքսէի Դաշնադրութիւնը պա-
տերազմի իրաւունքին վրայ , պիտի
խմբագրէ միջամտութեան և իրաւա-
բարութեան ծրագիր մը :

Ահա տակ չորս նշանայիցեր (jalou)
գրուած իր ճամբուն վրայ՝ որոնք պի-
տի առաջնորդեն զինք պատերազմա-
կան աւելի մարդասէր կանոնադրու-
թեան մը : Ասիկա արդէն անժխտելի
յտնալիմնութիւն մըն է բարբարոսու-
թեան հին մտայնութեան վրայ ո-
րոնց ձեռքէն մարդ յաջողած չէ գեւ
իր օձիքը ազատել և որոնց գէժ
զինուած է արդի ընկերութեան պար-
կեշտ և ուղղամիտ մարդ :

Այս բարերար գործին օգնելու հա-
մար բազմաթիւ պատգամաւորութիւն-
ներ գաղթած են անթութեանց պատ-
տիրակներուն տանկու քաջալերիչ
խօսքեր . իբր ժողովրդային զգացում-
ներու արձագանգ՝ բարձրաձայն ըս-
տած են անոնց թէ՛ բովանդակ աչ-
խարհ իրենց հետ է , թէ՛ մարդկային
խիղճը կը հսկէ իրենց այխտաու-
թեանց վրայ ու կը ծափահարէ ա-
նոնց : Խաղաղութեան համաժողովը
չէր կրնար խուլ մնալ բացորոշուած
նշանակիչ այսքան ցոյցերու գէժէ կա-
ռավարութիւնները պիտի կրնան ար-
դեքներ տեսնել , սակայն ի՞նչ կ'ար-
ժեն քանի մը թումբեր՝ շղթայազերծ
ծովու մը միշտ բարձրացող ալիքներուն
գէժ . արդարութիւնը պիտի յաղթէ
յետադէմներու յամառութեան . ա-
սիկա պիտի սղաննէ զանի :

Արդարև ոչազրութեամբ գիտելով
գիւտնադիտական հորիզոնը՝ հոն կը
տեսնենք փոխորկի յառաջընթաց բազ-
մաթիւ նշաններ : Խել մը հին վէճեր
կան մարերու : Վերջնական խաղա-
ղութենէ առաջ՝ հարկ է մտքը հին
հաշիւները : Ամենէն առաջ կարևոր է
իրոյց կացութիւնը պարզել , ինչ որ
պիտի զիւրացնէ յետոյ ընկերութիւ-
նը հաստատել . աւելի մարդասիրա-
կան նորագոյն հիմերու վրայ : Լաւա-
գոյն զաղափար մը կազմելու համար

այլ և այլ առկախ խնդիրներու վրայ
որոնք քաղաքական հորիզոնը կը մթա-
գնեն , յառաջ կը բերենք հա հե-
տեւալ առջերը , արդիւնք գրչին հո-
յակապ պետական մարդու մը՝ Պ.
Էմիլիո Դասթէլարի որ նոր անհետա-
յառ աշխարհէս : Այն պահուն որ
Սպանիացի նշանաւոր գրողը իր վեր-
ջին շունչը կ'առնուէր , նոր աւար-
տած էր ընդարձակ տա մնասիրու-
թիւն մը Խաղաղութեան Համաժողո-
վին վրայ : Ահա տակ այլ թանկագին
վաւերագրին գլխաւոր հառաւածները
որոնք յարտերութիւն անին կատար-
ւոյ գէպքերուն հետ .

« Խաղաղական կառավարութեան յա-
տարարութիւնը վերջերս Չինու մէջ
տեսնցած գիւտնադիտական աշխա-
ղութեանց հանդէպ , Փրանսայի և
Անգլիոյ միջև գտնուած անհամաձայ-
նութիւնները՝ Սուտանի և Նեղոսի
առթիւ . անգլիական նաւատորմին
յաւելումը որու անխուսելի հետեանք
եղան գլխավորի աստուծայ գա-
ղարում մը և կարևոր բաց մը . փո-
փոխութիւնը Ամերիկայի սրով իր ճար-
տարարութեա ու գործունեայ բնու-
թո թիւնը չափաւորեց՝ ինչպէս հա-
մար պատերազմի և երկրակալու-
թեան գիրկը . Չինաստանի բաժանու-
մը՝ որու կ'ըզման համաշխարհային
փառատիրութիւններ . Ռուսական եր-
կաթուղիի յառաջխաղացութիւնը Մոն-
կոլիոյ մէջ . Թրանսպալի պայքարնե-
րը՝ Քրիւկէրի նախագահութեան և
Գափի իշխանապետութեան միջև .
Բորթուկայի և իր գաղթականու-
թեանց գէժ եղած սղանալիքները .
մեր տարարազգ Սպանիոյ որքան հիմ-
նաւոր այլքան և արդարացի ստակում-
ները . հակառակութիւնը որ կը տիրէ
Թուրքիոյ և Յունաստանի , Փրանսայի
և Բրուսիոյ , Ռուսիոյ և Անգլիոյ միջև ,
Աւստրիոյ ցեղային խռովութիւնները ,
ներքին շարժումը որ կը պահանջէ ար-
դի Գերմանիայէն աւելի ընդարձակ
և աւելի բազմամարդ Գերմանիա մը ,
անհամաձայնութեան սերմերը որ կը

գտնուին մեծ Տէրութեանց միջև՝ իրենց գաղթականութեանց հողային ընդարձակման հետևանքը. — այս ամեն բաները կ'ըսեն թէ 1900ի Արուեստահանդէսէն հարը խաղաղութեան ժամ մը չպիտի ունենանք, և թէ պատերազմի տարեքը զրուած ու տարածուած են ամեն կողմ: բոց աստի, յառաջդիմութիւնը ոչ յանկարծակիան կերպով կը կոտորուի և ոչ հրաշքով. անիկա չի հնազանդիր ոչ միակ ազգի մը մղումին, և ո՛չ ալ միակ անհատի մը համոզկեր խօսքին. անիկա կը զարգանայ յամբօրէն և քոյլ առ քոյլ այնպիսի իտէպի մը տակ՝ որ շարունակ իրականութեան կը փոխուի, հակառակ այն սեղմումներուն որոնց ենթակայ են ամեն նորածին գաղտփարներ և հակառակ ազատութեանց որք կ'ընկերանան ամեն կենսական իրողութեանս ինչ որ ալ ըլլայ, տարփուցեք մշտնջենական խաղաղութեան մը խոհայր, ու օրհնենք Լահէյի Վեհաժողովը որ կոչուած է կերպով մը խաղաղութեան գառը պաշտպանելու ոչ:

Այս պատկերին կցենք Բոլանական, Փնդանտական, Մակեդոնական ու Հայկական խնդիրները, այն աստի կ'ունենանք կատարեալ գաղտի որ մը այն դժուարութեանց վրայ որ կրնան ծագիլ: Հայկական խնդիրը մանաւանդ, որ մեզ համար կենսական կարեւորութիւն մ'ունին և ամենէն աւելի կը գրաչեցնէ քաղաքական աշխարհը: Անտարակայս Նսխախնտութեան մէկ շնորհն է որ Երւորդ-Քէօշկի Մենակեայը կարծես հաճոյք կը զգայ անընդհատ արծարծելու այս հրատապ խնդիրը: Կարծես կը վախնայ որ չ'մտցուի այն և կուզէ զխնդրաւել ոչ միայն Եւրոպայի ալ և բախանդակ մարդկութեան: Գրեթէ ամիս չ'անցնիր որ նոր սպաննութեանց վրայ չ'ստատի Մէյիէյ ապականեր են ասոնք զորս հաճոյք կը զգայ տալու ամեն պատկեշտ բանի որ կայ երկրիս վրայ: Սպաննութիւնները իրարու կը յաշարեն պարբերաբար

արգիլելով կառավարութիւնները որ ինքնախաղաղութեան մէջ քնանան անվերջով խաղաղութեամբ: Մեր հայրենակիցներուն ամենէն անպաշտպանները չեն միայն որ կ'իյնան կարմիր Սուլթանի սուրին սակ. ստէպ կը նախընտրէ նա ամենէն ազնիւ գլխներ զորս կը նետէ Եւրոպայի երեսն ի վեր, իբր արինտոտ հրաւէր մը կուտի: Վերջին օրերս Հայ կաթոլիկ վարդապետ մը՝ Հայր Պապմանեան սպաննուած կը գտնուի Գոծածիի վանքին մէջ, Թօքատի մօտ. կ'ըսուի թէ բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուած են: Կը կարծէք որ բուն իսկ սերագործներն ըլլան ձերբակալուողները: Վատն է կից որ սպաննութեան հեղինակները լաւ կը պաշտպանուին, որովհետեւ անոնք Երւորդի գահճին հըւ գործիներն են: Քանի մը հոգ' որ հաճեցի չեն եղած նորի՛ն Բարձրութեան՝ բանաբ կը նետուին և այս կերպով քանի մը զոհ աւելի մատուցուած կ'ըլլայ կայսերական Մարդապանին:

Ե՞րբ արեմն լուծու՞մ պիտի տրուի այս անուանարկիչ առամին որ Հայկական խնդիր կը կոչուի: Ո՞րչափ զոհ կը պահանջուի ուրեմն՝ ի առունք ունենալու համար վերջապէս մարդկային արգարութեան և աստուածային գլխութեան:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Արդոյ բաժանորդներէն անոնք որ ցարգ չ'են վճարած բաժնեկիր, կը խնդրուի անգամ մ'ալ կարգալ փիլիսոփի բաժանորդադրութեան պայմանները:

Տեղոյ անձկութեան պատճառաւ յաջորդ թիւին մէջ պիտի հրատարակուի վաճայ սովելոյ ի նշանաւ արուած Արշակ Բ.ի ներկայացման հաշուեցոյցը: